

գարուն վանական աւանդութիւն մը: (Տես P. E. F. 1877. էջ 42):

գ) Ս. Աստուածածնի վարդը. — Նշանաւոր է Երիթովի վարդը որ կը յիշուի Ս. Գիրքին մէջ. «Իբրեւ զարմաւենի բարձրացայ յենգադս եւ իբրեւ զաունկ վարդենոյ յԵրիթով» (Սիրաք. ԻԳ. 18), բայց ոմանք Երիթովի վարդ ըսելով կը հասկնան արեւածաղիկը եւ բանաստեղծներն ալ՝ շուշանը:

Անարիգոմիտս կը գրէ թէ Երիթովի վարդերը կը բողբոջին փշալի տունկերէ. անոնք Քրիստոսի ծնընդեան գիշերը կը բացուին և յետոյ կը գոցուին, ի նշան Ս. Կուսի ծննդեան: Եղիսէի աղբիւրին քով կը բուսնին սալորենիի նման փշալից ծառեր՝ որոնց վըրայ կը բողբոջին ծաղիկներ զոր ռամիկները կ'անուանեն Երիթովի վարդեր. զարմանալի ներգործութեամբ մը՝ Փրկչին ծննդեան գիշերը քիչ մը կը բացուին եւ յետոյ կը գոցուին. անոնք թէպէտեւ չոր են, բայց Ս. Կուսին ծննդեան վկաներ և օրինակներ են: Վարդը Երիթովի մէջ կը կոչուի Ս. Աստուածածինի անունով և կ'ըսուի թէ երբ ջուրի մէջ գրուի կը բացուի եւ օգտակար է կանացի հիւանդութեանց: Ոմանք կ'ըսեն թէ փշալի տունկերէն չեն բողբոջիր, այլ անմիջապէս հողէն կը բուսնին բարակ և կարճ արմատով. իբր օրինակ Ս. Մարիամու խոնարհութեան, ինչպէս կը վըրկայէ Nicolas Radzivil վրացի իշխանը Երուսաղէմի իր Ուղեգրութեան գրքին մէջ (Բ. պրակ): Մարինոս կը գրէ թէ Երիթովի մէջ տեսած է վարդը չափաւոր մեծութեամբ ու կը յարէ թէ թերեւ հին ժամանակները աւելի մեծ կ'ըլլար Երիթովի վարդը. ինքը Երուսաղէմի մէջ տեսած է արաբներէն բերուած մեծագոյն